ԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ
ՎԻՐՏՈՒԱԼ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ |ԴԱԴԻՎԱՆՔ, ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ|

Գյումրի

2023

Մենագրության հրատարակության է երաշխավորել՝

Աշխարհաժողովի նախաձեռնող խումբը

Գիտական ղեկավար՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Արմեն Ներսիսյան

Գրախոս՝

Հակոբյան Ա.

«Արցախի մշակութային ժառանգության պահպանումը՝ նորագույն տեխնոլոգիաների միջոցով |Դաղիվանք, Սբ. Ղազանչեցոց եկեղեցիներ|» /Ա. Հակոբյան, 15էջ/։

Մենագրությունը՝ ԱԿՎԱ-ի (Ազգային կառավարիչների վիրտուալ ակադեմիայի) առաջին՝ ազգընկալ մակարդակի պաշտպանիչ թեզն է։

Աշխատությունում շեշտակի անդրադարձ է կատարվում ներկա ժամանակներում ամենարդիական հարցին՝ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային օջախների նկատմամբ ոչնչացման քաղաքականություն վարելուն։

Ճգնաժամը հաղթահարելու և վանդալիզմի քաղաքականությանը վերջ դնելու համար մեր կողմից իրականացվում է Արցախի մշակութային ժառանգությունների 3D մոդելավորում, շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառման։

Հետազոտությունը կարող է ելակետ հանդիսանալ այս ուղղությամբ նոր գիտական հետազոտությունների և գործնական քայլերի կատարման համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ----------5

ԳԼՈՒԽ 1.

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ----------6

1.1 Հայկական քաղաքակրթական ժառանգության պահպանումը ՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ ----------6

1.2 Տեխնոլոգիական նորագույն գործիքների կիրառումը քաղաքակրթական ժառանգության պահպանման գործընթացում: sketchup----------8

ԳԼՈՒԽ 2

ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՈՆՈԼԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ. (ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵՎ ԴԱԴԻՎԱՆՔԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ)----------10

2.1 Արցախի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու պատմական նկարագիրը: 3D մոդելավորումը՝ Արցախի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու օրինակով-------10

2.2 Արցախի Դադիվանք եկեղեցու պատմական նկարագիրը: 3D մոդելավորումը՝ Արցախի Դադիվանք եկեղեցու օրինակով----------12

ՎԵՐՋԱԲԱՆ----------14

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------15

ՆԱԽԱԲԱՆ

21-րդ դարում համամարդկային քաղաքակրթությունը գտնվում է խորքային ճգնաժամում, որը պրոյեկտվում է հայկական իրականության վրա: Ճգնաժամի արատավոր երևույթներից մեկը մշակութասպանությունն է, կամ որ նույնն է կուլտուրոցիդը: Այն իրականացվում է մակաբույծ քաղաքակրթությունների կողմից արարող քաղաքակրթական ժառանգության նկատմամբ: Վեջինիս ցայտուն օրինակը Հայկական քաղաքակրթական ժառանգության նկատմամբ վանդալիզմի իրականացում է թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից: 2020 թ-ի Արցախյան պատերազմից հետո Ադրբեջանի տիրապետության տարկ անցած հայկական մշակության ժառանգության նկատմամբ ակտիվ մշակութասպանական քաղաքականություն է իրականցվում: Հետևաբար ժամանակակից իրողությունները, ճգնաժամը և կուլտուրոցիդը, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ՝ հայկական մշակության արժեքների պահպանման հստակ պահանջ են ներկայացնում հայ համակեցությանը: Վերջինիս էլ հանդիսանում է մեր հետազոտական աշխատանքի նպատակը՝ Արցախի մշակութային ժառանգության պահպանումը նորագույն տեխնոլոգիաների միջոցով:

Նպատակից ելնելով առաջադրվել և լուծվել են հետևալ հետազոտական խնդիները.

- ներկայացնել նորագույն տեխնոլոգիական գործիքների նշանակությունը քաղաքակրթական ժառանգության պահպանման գործընթացում,
- ներկայացնել Sketchup 3D մոդելավորման ծրագրի հնարավորությունները,
- ներկայացնել Սբ. Ամենափրկիչ եկեղեցու պատմական նկարագիրը,
- կատարել 3D մոդելավորումը՝ Արցախի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու օրինակով,
- ներկայացնել Դադիվանք եկեղեցու պատմական նկարագիրը,
- կատարել 3D մոդելավորումը՝ Արցախի Դադիվանք եկեղեցու օրինակով:

Հետազոտության ընթացքում օգտվել ենք տեսական ընդհանրացման, գծաչափական, 3D մոդելավորման, մտապատկերի և այլ մեթոդներից:

ԳԼՈՒԽ 1
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

1.1 ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Համամարդկային քաղաքակրթության զարգացման ժամանակակից հանգրվանում, տեխնոլոգիական նորագույն գործիքների շնորհիվ ձևավորվել է իրականության ընկալման երկու հարթություն՝ նյութական և վիրտուալ: Այսօր հաճախ վերջինումս ձևավորված իրականությունն է թելադրում հասարակության զարգացման միտումները՝ տիրապետող արժեքները, որոնց նյութականացմամբ էլ ապահովվում է հասարակության վարքագիծը՝ կենսակերպը: Այդ իսկ պատճառով, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում դարձել է գերկարևոր առաջնահերթություն:

Մեր համոզմամբ, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը խիստ անհրաժեշտ է նաև քաղաքակրթական ժառանգության պահպանման տեսանկյունից, քանի որ դա թույլ է տալիս տարածության ու ժամանակի մեջ ստեղծված նյութական ու հոգևոր արժեքները ոչ միայն հասանելի դարձնել տեղեկույթի փոխանցման արդի միջոցներով, այլև ապահովել դրանց մնայնության անընդհատականությունը և հետագայում կրկին վերականգման հնարավորությունը, ինչպես ժամանակին դա հնարավոր դարձավ գրերի գյուտի, կամ տպագիր գրականության շնորհիվ: Այսինքն, նորագույն տեխնոլոգիաները հանդիսանում են մեր ժամանակի այն հեղափոխական գործիքները, որոնք թույլ են տալու քաղաքակրթական ժառանգությունը փոխանցել հաջորդ սերունդներին:

Այս խնդիրն առավել քան պահանջված է հայկական քաղաքակրթության համար, քանի որ և՛ տարածության, և՛ ժամանակի մեջ, մեր թշնամիների կողմից պարբերաբար, հետևողականորեն ոչնչացվել են հայկական քաղաքակրթական արժեքների նյութական հիմքերը՝ եկեղեցիներ, դպրոցներ, բերդեր, ամրոցներ և զանազան այլ

կառույցներ[1]: Հետևաբար, ժամանակակից տեխնոլոգիաների, մասնավորապես՝ 3D մոդելավորման շնորհիվ, հնարավոր է վերականգնել մեր քաղաքակրթական նյութական (ոչ միայն) ժառանգության արժեքները և դրանք փոխանցել հաջորդ սերունդներին: Դա հնարավորություն կտա ոչ միայն ապագա փոխանցել մեր արժեքները, այլև ապահովել քաղաքակրթական ժառանգության անընդհատականությունը, բացահայտելով նաև՝ մեր քաղաքակրթական առաքելության խորքային շերտերը:

Խնդիրն առավել քան արդիական է հիմա, երբ 2020 թվականի Արցախյան պատերազմի պարտությունից հետո, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական մշակութային օբյեկտներին վերացման վտնագ է սպառնում, ավելին՝ արդեն իսկ սկսվել է դրանց պղծման գործողությունները:

Ներկայիս գործող իրականության մեջ, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը խիստ անհրաժեշտ է քաղաքակրթական ժառանգության պահպանման տեսանկյունից, քանի որ դա թույլ է տալիս մշակութային ժառանգության և մշակութային ներուժի պահպանումը: Այս ամենը փաստ է դարձնում այն, որ նորագույն տեխնոլոգիաները հանդիսանում են այն կարևորագույն գործիքը, որով կարողանալու ենք փաստել հայկական ինքնությունը տարբեր հատվածներում և դրանց փոխանցումը մեր իսկ հաջորդ սերունդներին և այս ամենում, նորգույն գործիքների կիրառությունը հիմնարար սկզբունք է հանդիսանալու մշակութային ժառանգության համալիր պահպանության, որը հետագայում պետք է դառնա Հայկական քաղաքակրթության առանցքային բաղադրիչներից մեկը: Հետևաբար, այս ուղղությամբ մշակվող ռազմավարությունները պետք է հիմնված լինեն հասարակական պահանջների, պատմական միջավայրի պահպանության միջև հավասարակշռված հարաբերությունների վրա:

[2] Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թվականի տվյալների՝ կանգուն մնացած հայկական 913 պատմա-ճարտարապետական հուշարձաններից 464-ն ամբողջովին անհետացել են 252-ն ավերել են, 194-ն ամբողջովին նորոգման կարիք ունի: https://www.1lurer.am/hy/2021/05/20

1.1 SKETCHUP ԾՐԱԳՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ:

Ներկայիս գործող իրականության մեջ, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը խիստ անհրաժեշտ է քաղաքակրթական ժառանգության պահպանման տեսանկյունից, քանի որ դա թույլ է տալիս մշակութային ժառանգության և մշակութային ներուժի պահպանումը: Բազմիցս ականատես ենք եղել Արցախի պատմամշակութային և կրոնական ժառանգության նկատմամբ վանդալիզմի և ոչնչացման քաղաքականության իրականացմանը, որը կրում է միտումնավոր և ծրագրված բնույթ և այս ամենի կանխարգելման ինչպես նաև հանրային կերպով ներկայացնելու Ադրբեջանական կողմի միտումնավոր և ապօրինի կերպով հայկական պատմական ժառանգությունների յուրացման և մեզ մեր իսկ պատմական հիշողություններից զրկելու քաղաքականությունը, անհրաժեշտ է կիրառել ժամակակից տեխնոլոգիաները որոնք կհանդիսանան փաստացի ապացույց տվյալ պատմական հուշարձանի հայկական լինելիության մասին: Այս առումով լավագույն միջոց է հանդիսացել մեզ համար sketchup 3D մոդելավորման ծրագիրը, որի շնորհիվ էլ իրականացնում ենք հայկական մի շարք եկեղեցիների մոդելավորում և վերականգնում, դրանով փաստում դրանց հայկական լինելը: SketchUp ծրագիրը իրենից ներկայացնում է եռաչափ դիզայնի և ճարտարապետական ձևավորման լավագույն միջոց: Այն հնարավորություն է տալիս հիմնովի վերականգնել ցանկագած պատկեր և այն հստակորեն ներկայացնել տարածության մեջ, ինչպես նաև պտտել առարկաները ցանկացած ուղղությամբ, ընտրել ցանկալի սանդղակը, չափել ստեղծված առարկաների չափերը ժապավենի չափման միջոցով և շատ ավելին: Այսօր ծրագիրը համարվում է եռաչափ մոդելավորման ամենաառաջադեմ ծրագրերից մեկը, քանի որ դրա զինանոցը պարունակում է 3D մոդելների հետ հարմարավետ աշխատանքի հնարավորությունների լայն շրջանակ:

Sketchup ծրագիրը[2], որը հանդիսանում է 3D մոդելավորման լավագույն հնարավորություններից մեկը, թույլ է տալիս ստեղծել ամենապարզ դետալից մինչև ամենաբարդ մոդելը: Այս գործառույթները

[2] Մանրամասն տե՛ս https://help.sketchup.com/en/downloading-older-versions

բաժանված են երկու բաժնի՝ մոդելավորման գործիքներ և անիմացիոն գործիքներ։

Ծրագրի կենտրոնում եռաչափ գրաֆիկն է՝ երեք առանցքային խմբերով, վերևում՝ պատուհաններն է, 3D մոդելներ ստեղծելու գործիքներով, դրանից վերև ընտրացանկի այլ շարք է որտեղ առկա է գործառույթների և գործիքների ավելի մեծ խումբ։

Ծրագրի գործնական կիրառման արդյունքները կտեսնեք հաջորդ գլխում։

ԳԼՈՒԽ 2
ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՈՆՈԼԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ. (ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵՎ ԴԱԴԻՎԱՆՔԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ)
2.2 ԱՐՑԱԽԻ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ: 3D ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ՝ ԱՐՑԱԽԻ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ

Մշակութային ժառանգության պահպանման առանցքը համապատասխան իրավական հիմքն է: Այս խնդիրը էլ ավելի արդիական է այսօր, երբ Ադրբեջանը շարունակելով իր հայատյաց քաղաքականությունը, հստակ ծրագրված գործողություններով հետևողականորեն իրականացնում է Արցախի հայաթափման, հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, օտարման քաղաքականություն՝ այս անգամ արդեն բացահայտ կերպով սպառնալով վերացնել ու ջնջել Արցախի հայկական եկեղեցիների ու այլ սրբավայրերի արձանագրությունները: Հայկական մշակութային ժառանգության ժխտողական քաղաքականությունը կյանքի կոչելու նպատակով Ադրբեջանի իշխանություններն օգտագործում են այսօր եկեղեցիների, վանական համալիրների և մի շարք մշակութային կառույցների գիտակցված ոչնչացման քաղաքականությունը:

Ըստ առաջադրված հետազոտական խնդրի, պետք է փաստենք, որ Արցախում կառուցված բոլոր հուշարձանների մեջ հանդիպում ենք գմբեթավոր վեց եկեղեցու, որից հինգը՝ Շուշի քաղաքում: Դրանցից մեկը՝ Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին է: Այն կառուցվել է 1868-1887 թվականներին և ունի սպիտակ կրաքարից պատրաստված ճակատ: Նրա ճարտարապետ Սիմոն Տեր-Հակոբյանը մտադիր էր եկեղեցին հիշեցնել Էջմիածնի տաճարին: Արևմտյան մուտքի դիմաց կանգնած է եռահարկ զանգակատունը, որը կառուցվել է 1858 թվականին: Զանգակատան երկրորդ հարկի յուրաքանչյուր անկյունում կանգնած էին փողեր փչող հրեշտակների մեծ արձանները: Սակայն դրանք ոչնչացվել են Արցախյան պատերազմի ժամանակ, երբ Շուշին գտնվում էր ադրբեջանական վերահսկողության տակ: Շուշիի ջարդերից հետո՝ 1920 թվականին, եկեղեցին փակվեց: Գմբեթի վերականգնումը եղել է 1988 թվականին: Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ՝ 2020 թվականի

հոկտեմբերի 8-ին Ադրբեջանի ռազմաօդային ուժերի կողմից հրթիռակոծվել և վնասվել է կրկին եկեղեցու գմբեթը[3] :

Ըստ մասնագետների, ամբողջ նախորդ դարում և Արցախյան երկրոդ պատերազմի ընթացքում, Ադրբեջանի կողմից իրականացված գործողությունները կարելի է հստակ բնութագրել որպես ցեղասպան և մշակութասպան, քանի որ նպատակուղղված են հայկական քաղաքակրթական ժառանգության ոչնչացմանը[4]: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում նախապես մշակված մեթոդաբանությամբ և գործիքակազմով քարտեզագրել ու վերականգնել հայկական քաղաքակրթական ժառանգության ներուժը:

Ելնելով առաջադրված հետազոտական խնդրից SketchUp 3D մոդելավորման ծրագրի կիրառմամբ մեր կողմից պատրաստվել է Շուշիի Սբ Ամենափրկիչ վանքի 3D պատկերը, որը հնարավոր է պահպանել և փոխանցել տեղեկույթի փոխանակման ժամանակակից գործիքներով: Օրինակը տեսնելու համար սկանավորել ներկայացված արագ արձագանքման կոդը:

[3] Տեղեկությունները վերցված են՝ https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/06/Mkrtchyan-Shahen-Lernayin-Karabaghi-hushardzannery-1.pdf

[4] Ադրբեջանի կողմից իրականացվող ներկա ցեղասպան ու մշակութասպան քաղաքականությունը ունի պատմական արմատներ, երբ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ներկայիս Ադրբեջանի մի շարք տարածքներում և բուն Արցախում իրականացվել է հայերի կազմակերպված ջարդեր, որոնք ամբողջությամբ տեղավորվում են թուրքերի ցեղասպան քաղաքականության տրամաբանության մեջ: Հետևաբար, նորօրյա պատմության ընթացքում Ադրբեջանի կողմից իրականացված Ցեղասպանության դատապարտումը պետք է խարսխված լինի նաև անցյալի պատմության վրա: Ընդ որում, այս ուղղությամբ մեր պամտագրությունը ունի հավաքած՝ ամբողջապես փաստարկված, հարուստ գիտական տեղեկույթ: Մասնավորապես տե՛ս Դաղայան Խ., Հայերը և Բաքուն (1850-1920թթ), Նորավանք ԳԿՀ, Երևան, 2006, 241 էջ

2.2 ԱՐՑԱԽԻ ԴԱԴԻՎԱՆՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ: 3D ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ՝ ԱՐՑԱԽԻ ԴԱԴԻՎԱՆՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ

Դադիվանքը հանդիսանում է պատմական Հայաստնի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոններից է (կոչվել է նաև Խութանավանք): Պատմական աղբյուրներում Դադիվանքը առաջին անգամ հիշատակվում է IX դարի առաջին կեսում:[5] Վանքը XII դարին ասպատակվում և ավերվում է սելջուկ թուրքերի կողմից[6]: Դադիվանքը վերականգնվում է XII դարի երկրորդ կեսում ու XIIIդ. Համալիրի մեզ հասած շենքերի ճնշող մեծամասնությունը այդ ժամանակաշրջանին է պատկանում:[7] Դադիվանքի մեծաքանակ կառուցվածքներից կազմված խոշոր համալիրը բաղկացած է երկու հուշարձանախմբերից, որոնցից հյուսիսայինում վանքի եկեղեցիներն են (թվով չորս) գավիթներ, զանգագատուն, իսկ հարավայինում՝ աշխարհիկ շենքեր: Դադիվանքի համալիրը, որը Հայաստանի ամենախոշոր ճարտարապետական անսամբլներից մեկն է, աչքի է ընկնում շենքերի տիպաբանական բազմզանությամբ: Դա վերաբերվում է առաջին հերթին վանքի աշխարհիկ շենքերին, որոնց թվում պալատական՝ «խրախճանքի» դահլիճը և հյուրատունը այդ տիպի հուշարձանները հազվագյուտ օրինակներ են իսկ գրատունը և սեղանատունը հայկական նման կառուցվածների շարքում աչքի է ընկնում իրենց ինքնատիպությամբ:[8]

Սակայն 2020 թ-ի պատերազմից հետո Դադիվանքը ևս անմասն չի մնացել ադրբեջանի մշակութասպան քաղաքականությունից: ելնելով այս հանգամանքից մեր կոմից իրականացվել է Դադիվանդի 3D մոդելոավորում: Օրինակը ներկայացված է արագ արձագանքման կոդի տեսքով, կիրառման համար սկանավորել այն

---

[5] Մ. Կաղանկատվացի, Պատմական Աղվանաց աշխարհի, Թիֆլիս 1913թ, էջ՝ 388

[6] Սամուել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ 1893, էջ՝ 132

[7] Տե՛ս Բ. ՈՒլուբարյան, Մ Հատարյան, Դադիվանք <<Հայկական Հայագիտական հանդես>> հատ. 8 Բերյութ 1980, էջ՝ 7-54

[8] Մուրադ Հասրաթյան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ՝44-49:

ՎԵՐՋԱԲԱՆ

1. Ներկա քաղքակրթական ճգնաժամի պայմաններում հայ համակեցության առաջ դրված կարևորագույն խնդիր է հանդիսանում Ադրբեջանական վերահսկողության տակ հայտնված տարածքներում գտնվող հայկական պատմամշակութային և կրոնական ժառանգության պահպանումը, վանդալիզմի դեպքերի կանխումը և մշտադիտարկման ապահովումը:
2. Քաղաքակրթական ժառանգության պահպանման և հետագա սերունդների փոխանցման համար նորագույն տեխնոլոգիական գործիքները մեծ հնարավորություններ են ընձեռում: Դրնացից մեկն է SketchUp 3D մոդելավորման ծրագիրը, որ միջոցով հնարավոր է հայկական մշակութային օջախների վերականգնումը, նախագծումը և վերաճարտարապետումը վիրտուալ տիրույթում:
3. Ներկայումս անհրաժեշտություն է առաջանում նախապես մշակված մեթոդաբանությամբ և գործիքակազմով քարտեզագրել ու վերականգնել հայկական քաղաքակրթական ժառանգության ներուժը, որի լավագույն տարբերակը 3D մոդելավորումն է հանդիսանում իդեմս Արցախի գլխավոր և հոգևոր կենտրոն հանդիսացող Սբ. Ամենափրկից եկեղեցու առցանց ներկայացման, որը կփաստի դրա հաեցի լինելը, այն հասանելի է էջ 11-ում: ներկայացված արագ արձագանքման կոդի սկանավորմամբ:
4. Ցեղասպան, մշակութասպան գործողություններից զերծ չմնաց Արցախի կարևորագույն մշակութային օջախներից մեկը՝ Դադիվանքը ունի հահպանման կարևորագույն խնիդիր վերջինիս ելնելով իրականացվել է 3D մոդելավորում այն հասանելի է էջ 13-ում ներկայացված արագ արձագանքման կոդի սկանավորմամբ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դաղայան Խ, Հայերը և Բաքուն (1850-1920թթ), Նորավանք ԳԿՀ, Երևան, 2006, էջ՝ 241
2. Կաղանկատվացի Մ, Պատմական Աղվանաց աշխարհի, Թիֆլիս 1913թ, էջ՝ 388
3. Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ՝44-49:
4. Մկրտչյան Շ. Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան», 1988, էջ՝ 216
5. Սամուել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ 1893, էջ՝ 132:
6. https://www.sketchup.com/ru
7. https://www.sci.am/m/newsview.php?id=477&langid=1
8. https://www.1lurer.am/hy/2021/05/20/%D5%87%D5%B8%D6%82%D5%B7%D5%AB%D5%AB-%D5%8D%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D5%82%D5%A1%D5%A6%D5%A1%D5%B6%D5%B9%D5%A5%D6%81%D5%B8%D6%81%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6-%D5%BA%D5%B2%D5%AE%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-Persecution/478948
9. https://help.sketchup.com/en/downloading-older-versions

ԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 29.05.2002թ.-ին գյուղ Կամոյում: 2020թ.-ին ավարտել է Կամոյի միջն. դպրոցը: 2020թ.–ին ընդունվել է Շիրակի Պետական Համալսարանի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի Քարտեզագրություն և Կադաստրային գործ բաժին: Սկսած 2022թ-ից Ազգային Կառավարիչների Վիրտուալ Ակադեմիայի ազգընկալ մակարդակի հետազոտող: Գիտական հետաքրքրությունների բնագավառներն են ՏՀՏ ոլորտի ժամանակակից ձեռքբերումները, դրանց կիրառումը կամ նշանակությունը քաղաքակրթական ժառանգության պահպանման գործում: Հետազոտության հմինական ուղղություններն են՝ Արցախի մշակութային ժառանգության պահպանումը՝ որպես ժամանակի հրամայական. (Արցախի Սբ. Ամենափրկիչ և Դադիվանք եկեղեցիների օրինակներով): Հեղինակ է 2 գիտական հոդվածների: